9(53)
Թ-88

Հ. ԹՐՅԱՆ

ԷՋԵՐ ԱՐԱԲԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Առանձնատիպ Հայկական ՍՍՌ
Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրից»,
№ 9, 1955 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1955

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9. 1955 Общественные науки

9 И(53)
Թ 88

Հ. Թրյան

ԷՋԵՐ ԱՐԱԲԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ[1]

Դարեր շարունակ թյուրքական բռնապետության տակ են գտնվել մի շարք ժողովուրդներ: Նրանք տևական պայքար են մղել իրենց ազգային ազատությունը ձեռք բերելու համար: Այդ ժողովուրդների ազատագրական պայքարը յուրաքանչյուր դեպքում ունենալով հանդերձ իր տեղական առանձնահատկությունները, կազմում է Մերձավոր Արևելքի ազատագրական շարժումների բաղկացուցիչ մասը և հենց դրանով էլ արժանի է լուրջ ուսումնասիրման:

Եթե մեր պատմագրության մեջ հայ ազգային ազատագրական շարժման մասին խոսելիս համառոտ կերպով նշվել է բուլղար, հույն և սերբ ժողովուրդների պայքարը ընդդեմ օսմանյան բռնապետության, ապա գրեթե ոչինչ չի գրվել արաբական երկրների ազատագրական շարժումների մասին, մինչդեռ պատմական փաստերը վկայում են, որ արաբական երկրներում, հատկապես XIX դարի երկրորդ կեսում տևական պայքար է մղվել թյուրքական տիրապետության դեմ:

254

Ներկա հոդվածի նպատակն է ընդհանուր գծերով ներկայացնել այդ պայքարը:

Արաբական երկրներում ազգային ազատագրական շարժումները նկատելի կերպով աշխուժանում են XIX դարի առաջին կեսերից՝ հասարակական, գրական և կուլտուրական միությունների երևան գալով, գլխավորապես Սիրիայում: Առաջին այդպիսի միությունը, որի մասին հիշատակություններ հասել են մեզ, հիմնվել է 1847 թվականին՝ Բեյրութում (այժմյան Լիբանանի մայրաքաղաքը): Այս միության հիմնադիրներից՝ Նասիֆ Եազըջին (ծնված Լիբանանում, գյուղացու ընտանիքից) և Բուտրոս Բուստանին՝ հետագայում դարձան XIX դարի արաբական գրականության կառկառուն դեմքերը: Միությունը կարճատև կյանք ունեցավ, գործեց ընդամենը հինգ տարի: Նրա ամենամեծ ծառայությունը եղավ այն, որ արաբ իրականության մեջ փորձեց ստեղծել կրոնքից և հարանվանություններից անկախ, համաարաբական, համազգային մի շարժում, որն ուղղված էր սուլթանական բռնապետության կողմից հրահրվող միջ-կրոնական, դավանաբանական երկպառակությունների դեմ:

Այն, ինչ որ չհաջողվեց իրագործել հիշված միությանը, մեծ չափով իրագործեց 1857 թվականին հիմնված «Ալ Ջամայիյահ Ալ Իլմիյահ Ալ Սուրիահ» (Սիրիական գիտական ընկերությունը): Այդ ընկերությանը անդամակցեցին արաբական երկրների տարբեր խավերի ու հարանվանությունների պատկանող շատ հայրենասեր արաբներ:

Արաբ ժողովրդի ազատագրության հարցը համարելով իրենց առաջնահերթ խնդիրը, միության անդամները [illegible] աշխատանք կատարեցին

[1] Մի հատված համանուն մենագրությունից:

СЕКТОР ВОСТОКОВЕДЕНИЯ АН АРМ. ССР
БИБЛИОТЕКА
ԳՐԱԴԱՐԱՆ

արաբական ժողովուրդների լավագույն արդիյունների վերանման, նրա դարավոր կուլտուրայի վերածնման ուղղությամբ։

Այս ընկերության գաղտնի ժողովներից մեկում առաջին անգամ արաբ իրականության մեջ կոչ արվեց ժողովրդական մասսաներին՝ պայքար ծավալել օսմանյան լծի դեմ։ Միության անդամներից՝ Իբրահիմ Յազըջին (Նասիֆ Յազըջիի որդիներից մեկը) գաղտնի ժողովում կարդաց «Տաղ հայրենասիրության» իր ոգեշնչող բանաստեղծությունը։ Այդ բանաստեղծության մեջ երգում էր արաբ ժողովրդի անցյալի փառքերը, գիտության, գրականության, արվեստի բնագավառում նրա ունեցած նվաճումները, և պարսավում էր արաբների այժմյան պասսիվությունը, հետամնացությունը, որը արտահայտվում էր հատկապես դավանաբանական անիմաստ պայքարում։ Բանաստեղծությունը կոչ էր անում բոլոր արաբներին՝ միանալ մի ազգային դրոշի տակ, ապստամբվել օսմանյան տիրապետության դեմ, թոթափել թյուրքական լուծը։

Հայտնի չէ, թե 1857—1860 թթ. լիբանանյան գյուղացիության ապըստամբության ժամանակ վերոհիշյալ նորաստեղծ միությունը ինչ դեր խաղաց, սակայն փաստեր կան, որոնց համաձայն, երբ օսմանյան իշխանություններին հաջողվում է գյուղացիական կռիվները վերածել կրոնական դավանաբանական պայքարի, այսինքն՝ դրուզների և քրիստոնյա մարոնիների կռվի, միությունը պայքար է ծավալում այս հակամարտությունը խրախուսող տարրերի դեմ։

Բուրժուական մի շարք պատմաբաններ 1860 թ. ջարդերը համարում են կրոնական հողի վրա ծավալված[1] կռիվներ, մինչդեռ իրականում դրանք ունեցել են սոցիալ-տնտեսական խոր արմատներ։ Այդ կռիվներն սկսվեցին Լիբանանի գյուղացիների կողմից ֆեոդալ կալվածատիրության դեմ։ Տվյալ դեպքում Լիբանանի ապստամբված շրջաններում գյուղացիությունը հիմնականում քրիստոնյա մարոնիներ էին, իսկ կալվածատերերը՝ մեծ մասամբ դրուզ մուսուլմաններ, այս հանգամանքը նենգորեն օգտագործվեց թե օսմանյան իշխանությունների և թե արևմտյան գաղութարարների կողմից, որպեսզի սոցիալ-տնտեսական հողի վրա սկսված պայքարը ներկայացնեն որպես կրոնական կռիվներ։

1860 թվականի դեպքերը, անկասկած, անդրադարձան օսմանյան կայսրության հետագա քաղաքական կյանքի վրա, այն իմաստով, որ արևմտյան տերությունները, հատկապես Ֆրանսիան, ավելի ուժեղ կերպով սկսեցին միջամտել Թյուրքիայի ներքին գործերին, Լիբանանին շնորհվեց մի տեսակ տեղական «ավտոնոմիա»։

Այժմ տեսնենք թե այդ ջարդերը ինչ անդրադարձում ունեցան ազատագրական պայքարի հետագա ընթացքի վրա։

1860 թվականից հետո արաբական միությունները ավելի մեծ վճռականությամբ պայքար ծավալեցին կրոնական և դավանական երկպառակությունների դեմ։

Հետապնդելով նույն նպատակը, Բուտրոս Բուստանին, այդ դեպքերին անմիջապես հաջորդող տարիներին հիմնում է արաբական առաջին քաղաքական թերթը «Նաֆիր Սուրիյահ»-ն (Սիրիայի սրափողը), բաց է անում դպրոց՝ «Ալ Մադրասա ալ Վատաննիյահ» (ազգային դպրոց), որտեղ և համազգային ոգով է դաստիարակում բոլոր հարանվանությունների պատկանող արաբ երեխաներին։ Հետևելով Յազըջիի և Բուստանիի օրինակին, Միության ուրիշ անդամներ և այլ հայրենասերներ, թերթեր են հրատարակում և ագիտացիոն պայքար ծավալում նույն գաղափարների մասսայականացման համար, կոչ անելով լայն մասսաներին՝ համախմբվել մի ազգային դրոշի շուրջը ու ապստամբվել օսմանյան լծի դեմ։

Այս ձեռնարկումներին հաջորդող չորս տասնամյակներում (1868—1908) իրար հետևից կազմակերպվում են գաղտնի ընկերություններ, որոնք ընդհատակյա աշխատանք են ծավալում, առանց դառնալու քաղաքական ինքնուրույն պարտիաներ։ Այդպիսի գաղտնի ընկերություններից առաջինը հիմնվում է Բեյրութում, 1875 թ. հինգ երիտասարդների կողմից, որոնց հաջողվում է կարճ ժամանակամիջոցում իրենց շարքերը ներգրավել տարբեր դավանանքի պատկանող մարտունակ և հայրենասեր մի շարք արաբ երիտասարդների։

Ընկերությունը իր ճյուղերը ուներ Դամասկոսում, Տրիպոլիում և Սայդոնում։ Ընկերության գործունեությունը գաղտնի լինելու հետևանքով երկար ժամանակ նրա անդամների թիվը մնաց փոքր. ընդունվում էին միայն վստահելի և փորձված այնպիսի անձեր, որոնք ընդունակ էին միության գաղտնիքները պահել և քաղաքական աշխատանք տանել։

Ընկերությունը կատարեց քաղաքական լուրջ աշխատանք։ Նրա անդամները գիշերները պլակատներ էին ամրացնում քաղաքի ամենաբանուկ վայրերում՝ կոչ անելով ժողովրդին դիմադրել օսմանյան իշխանություններին՝ բոյկոտի, սաբոտաժի և պայքարի այլ ձևերով խանգարել թյուրքական կառավարության ձեռնարկած միջոցառումները։ Պլակատները մեկ-մեկ ամրատառագրեր էին՝ ուղղված օսմանյան կառավարության դեմ։ Դրանցում մերկացվում էին կառավարության կամայականությունները, կոչ արվում ապստամբության։

Նման պլակատների երևան գալը, կենտրոնական իշխանություններին մատնում է շփոթության։ Սուլթանի անձնական կարգադրությամբ Կոստանդնուպոլսից արաբական երկրներն են ուղարկվում հատուկ քննիչներ, որոնք ձեռնարկում են հետաքննություններ, արաբ հայրենասերներին ենթարկում սեպրեսիաների, նրանցից մի քանի առաջավորներին բանտարկում։

Հակառակ այս բոլորին՝ ընկերությունը շարունակում է իր գործունեությունը և միայն Աբդուլ Համիդի բռնակալության ամենախիստ օրերին, երբ այլևս հնարավոր չէր գործել, ցրվում է, անդամներից շատերը հեռանում են երկրից՝ ոմանք դեպի Եգիպտոս, ուրիշները՝ Ֆրանսիա։

Ընկերության գործունեության մասին շատ քիչ փաստաթղթեր են մնացել։ Նրա հիմնադիրներից գոկտ. Ֆարիս Նիմրը[1], որը 1883 թ. հեռացել էր Բեյրութից Եգիպտոս, ոմն Ժորժ Անտոնիուսի[2] խնդրանքով հայտնել է

[1] Ֆ. Էնգելսի մոտ հայտնի գրույթ է, որ ֆեոդալիզմի դեմ ուղղված գրեթե բոլոր շարժումները արտաքինից ընդունում էին կրոնական զգեստավորում, դառնալով ազատագրական շարժումներ։

[1] «Ալ Մուկտատաֆ» գիտական պարբերաթերթի և «Ալ Մուկատամ» հայտնի օրաթերթի հիմնադիրներից մեկը։

[2] *G. Antonius*, The Arab Awakening, New York, 1939.

ընկերության անդամներից 22-ի անունները և ավել մի շարք տեղեկություններ՝ այդ կազմակերպության գործունեության և պլակատների բովանդակության մասին, տեղեկություններ, որոնք օգտագործված են Ժ. Անտոնիուսի գրքում, մի քանի այլ փաստաթղթերի հետ միասին:

Ժ. Անտոնիուսի բերած փաստերից երևում է, որ 1880 թ. հուլիսի թվագրությամբ տարածված պլակատում դատապարտվում է արաբների ցուցաբերած անտարբերությունը թյուրքական բռնապետության նկատմամբ և կոչ է արվում վերացնել ներքին դավանական տարաձայնությունները, համախմբվել ու միասնական ճակատ կազմել ընդդեմ օտարերկրյա հարստահարիչների: Այդ պլակատի վրա նկարված է եղել մի մերկ թուր, որի ներքև գրված՝ հետևյալ նշանակալից խոսքերը՝ «Սրով միայն հնարավոր է մեր նպատակներին հասնել, եթե հաջողություն ենք ցանկանում, դա է միայն մեր միջոցը»:

Երկրորդ պլակատում օսմանյան իշխանությունները մեղադրվում են իրենց խոստացած ռեֆորմները չիրագործելու համար: Պահանջվում է ներքին անկախություն, տեղական ավտոնոմիա:

Երրորդ պլակատում (1880 թ. դեկտեմբեր) շարադրվում է պայքարի դուրս եկած արաբների քաղաքական ծրագիրը, որի հիմնական կետերն են՝

1. Սիրիայի և Լիբանանի անկախությունը.
2. Արաբերենի ճանաչումը որպես պետական պաշտոնական լեզու.
3. Խոսքի և մամուլի ազատություն.
4. Դպրոցների և կուլտուրայի տարածման ազատություն.
5. Արաբ զորակոչիկների զինծառայության կատարումը տեղում:

Այս երեք պլակատների բովանդակությունից երևում է, որ ընկերության նպատակների մեջ, ժամանակի ընթացքում տեղի են ունեցել նկատելի փոփոխություններ: Սկզբում կոչերը ընդհանուր բնույթ են կրել, եղել են օսմանյան իշխանությունների հանդեպ դժգոհություն արտահայտող դեկլարացիաներ, սակայն, հետագայում գնալով դարձել են ավելի կոնկրետ, արտահայտել են արաբական ժողովրդի ազգային ձգտումները, ընդհուպ մինչև քաղաքական ազատությունը:

Արաբական ազգային-ազատագրական շարժումների պատմության մեջ այս գաղտնի կազմակերպությունը առաջինն էր, որ առաջ քաշեց պայքարի քաղաքական ծրագիր:

Արաբական ազգային ազատագրական շարժումների մասին որոշ փաստեր հաղորդում են օտարերկրյա ժամանակակիցներն իրենց հուշերում: Գաբրիել Շարմն իր գրքում, նկարագրելով իր ճանապարհորդական տպավորությունները, ի միջի այլոց, հետևյալն է ասում... «Բեյրութում գտնըված ժամանակս հանդիպել եմ մուսուլման երիտասարդների, որոնք մեծ եռանդով կազմակերպում էին միություններ, դպրոցներ, հիվանդանոցներ և այլն: Ուշագրավ է այն, որ այս բոլորը ամենևին չէին կրում կրոնական բնույթ: Միություններին մասնակցում էին նաև քրիստոնյա արաբներ»[1]:

Մի ուրիշ ֆրանսիացի ճանապարհորդ, որը շրջել է համարյա արաբական բոլոր երկրները, սկսած հյուսիսային Աֆրիկայից մինչև պարսկական ծոցի շեյխությունները՝ խոսում է արաբական երկրներում տիրող ան-

[1] *Gabriel Charmes,* Voyages en Syrie, Paris, p.p. 171—172.

հանգստության մասին. բոլոր տեղերում էլ, ասում է հեղինակը, հանդիպեցի նույն համատարած զգացմունքներին՝ ատելություն թյուրքերի նկատմամբ: Բոլորին ատելի այդ լուծը թոթափելու համար միասնական պայքարի անհրաժեշտության գաղափարը կարծես ծավալ է ընդունում մտքերի մեջ...[1]:

Արաբական թերակղզում «... կազմակերպված քաղաքական պայքարի տրամադրություններ են նկատվում...», հայտնում է իր հաղորդումներից մեկում՝ Ջեդդայում բրիտանական դիվանագիտական ներկայացուցիչը[2]: Նա ասում է՝ «... Ինձ հայտնի է, որ ազատության գաղափարը հուզում է մինչև անգամ Մեկկայում ապրող մարդկանց: Փաստեր կան, որ ինձ կասհել են տալիս մի ծրագրի գոյությունը, որի համաձայն որոշ շրջաններում ձգտում են միացնել Նաժդը և Միջագետքը Մանսուր փաշայի իշխանության տակ, իսկ Ասիրն ու Եմենը Ալի Իբն Այեդի՝ Թյուրքիայից անջատ»:

Այս և բազմաթիվ այլ վկայություններից հետևում է, որ դժգոհությունը և ատելությունը օսմանյան իշխանությունների դեմ եղել է համատարած: Թյուրքական լուծը նույնքան ատելի էր Դամասկոսի, Բեյրութի և Կահիրեի արաբին, որքան գյուղի ֆելլահին, կամ անապատի բեդևին: Այս բոլոր տեղերում էլ դժգոհության պատճառը նույնն էր, թեպետև այդ դժգոհությունն արտահայտվում էր տարբեր տեղերում տարբեր ձևերով, մի տեղում գաղտնի միությունների միջոցով, մի ուրիշ տեղ՝ լուռ դիմադրությամբ, այլուր՝ ավելի բացահայտ, ընդհուպ մինչև անգամ ժողովրդական հուզումներով: Այս բոլորով հանդերձ, տակավին չկար կազմակերպված դիմադրություն: Տարբեր վայրերում գործող կազմակերպությունների կապերը չափազանց թույլ էին, ուստի 80-ական թվականներին ծավալված վերոհիշյալ պայքարը օսմանյան լծի դեմ դեռևս չպիտի համարել կազմակերպված համաարաբական շարժումներ:

* * *

Համիդյան բռնակալությունը բացասական անդրադարձում ունեցավ արաբական ազգային ազատագրական շարժման հետագա ընթացքի վրա: Համիդյան ոստիկանական դաժան ռեժիմը, նրա ստեղծած վախի ու սարսափի մթնոլորտը գեթ ժամանակավորապես թուլացրին գաղտնի միությունների գործունեությունը: Միության անդամներից նրանք, որոնց հաջողվել էր խուսափել համիդյան դատաստանից՝ հեռացան երկրից: Հենց այս պատճառով էլ՝ Աբդուլ Համիդի իշխանության 32 տարիների ընթացքում, արաբական ազգային ազատագրական շարժման կապակցությամբ հիշվում է ընդամենը երկու անուն՝ Աբդուլ Ռահման ալ Կավակիբին և Նաժիբ Ազուրին:

Ալ Կավակիբին ծնվել է 1849 թ. Հալեպ քաղաքում: Նա եղել է XIX դարի արաբական ազգային շարժման ամենախոշոր պրոպագանդիստը: «Ալ-Մուայադ և Ալ-Մանար» թերթերում նա հրատարակել է ազատասիրական մի շարք հոդվածներ, որոնք հետագայում ամփոփվեցին երկու գրքերում

[1] *Denis de Rivoyre,* Les Vrais Arabes et leur Pays, Paris, p. p. 494–495.
[2] Public Record Office, F. O. 78/3415.

և առանց հեղինակի անունը կրելու, գաղտնի կերպով տարածվեցին արաբական երկրներում: Այդ գրքերից մեկը կոչվում է «Ումմ ալ-Կուրա» (Կորանում Մեկկա քաղաքը անվանվում է նաև Կուրա), մյուսը «Թաբայ ալ Իստիբդադ» (բռնության ստորոգելիները): Այս վերջին գրքում, որը հանդիսանում է լուրջ մի աշխատություն, հեղինակն իր ցասումն ու ատելությունն է հայտնում համիդյան բռնության դեմ[1]: Ալ-Կավակիբին առաջարկում է կազմակերպված պայքար ծավալել կրոնավորների խավարամոլության և ժողովրդի տգիտության դեմ, վերականգնել արաբների անցյալի իրավունքները, իսլամական աշխարհում: Ալ-Կավակիբիի կողմից մղված պայքարը նկատելի չափով հակադրվեց Ջամալուդդին Ալ-Աֆղանիի կողմից գլխավորված պան-իսլամական շարժմանը, որը հովանավորվում էր Աբդուլ Համիդի կողմից և նպատակ ուներ թյուրքական ազդեցությանը ենթարկել ամբողջ իսլամական աշխարհը: Սակայն, պայքարելով պանիսլամի դեմ, Ալ-Կավակիբին հանդես չի եկել առհասարակ իսլամական կրոնի դեմ, ավելի ճիշտ նա ձգտել է իսլամի ազդեցության հարցում վերականգնել արաբական նախկին գերիշխանությունը:

Ալ-Կավակիբին, պայքար ծավալելով բռնության դեմ, հանդես էր գալիս որպես հումանիստ: Նա, փորձելով վերականգնել արաբների մոտ ազգային ոգին, զարկ տալ նրանց կուլտուրային, վերականգնել անցյալի լավագույն տրադիցիաները, հանդես է գալիս որպես արաբական ազգային շարժման նախապատրաստողներից, ռահվիրաներից մեկը, սակայն Ալ-Կավակիբիի պայքարը միշտ էլ շարունակեց պահել իր իսլամական բովանդակությունը, իր կրոնական բնույթը:

Այս ժամանակաշրջանի երկրորդ դեմքը Նաժիբ Ազուրին 1904 թ. Փարիզում հիմնում է Ligue de la Patrie Arabe ընկերությունը (Արաբական հայրենիքի լիգան), որը օսմանյան լծի դեմ ապստամբելու կոչեր էր հրատարակում: Այս լիգայի առաջնահերթ նպատակն էր ձեռք բերել Սիրիայի և Իրաքի անկախությունը:

Նաժիբ Ազուրին 1905 թ. Փարիզում հրատարակում է «Արաբ ազգի զարթոնքը» (Le Réveil de la Nation Arabe) ֆրանսերեն լեզվով, իսկ 1907 թ. դարձյալ ֆրանսերեն լեզվով հրատարակում է «Արաբական անկախությունը» (L'Indépendance Arabe) անունով ամսաթերթը, որը մի տարվա կյանք է ունենում:

Առհասարակ Ազուրիի նախաձեռնած շարժումը արաբական երկրներում լայն արձագանք չգտավ, ընկերությունը արաբական ազգային ազատագրական շարժման վրա շատ չնչին ազդեցություն միայն ունե-

[1] Ալ-Կավակիբիի այս աշխատության մասին քննադատական հոդված կա (տես Oriente Moderno, Nr. 7, Luglio 1954), որտեղ հոդվածագիրը Ettore Rossi փորձում է ապացուցել, թե աշխատության բովանդակությունը մեծ մասամբ Victorio Alfieri (իտալական ազգային շարժման ռահվիրաներից մեկը) «Della Tirranide» (բռնության մասին) գրքի համառոտ կրկնությունն է: Այնուհետև հոդվածագիրը ապացուցում է, որ Ալ-Կավակիբին մեծ չափերով օգտագործել է Ժան Ժաք Ռուսոյի մտքերը և Ֆուրիեի գրվածքները: Անկախ այդ փաստից, Ալ-Կավակիբին խոշոր դեր է կատարել հենց նրանով, որ նրան հաջողվել է այդ ժամանակվա լուսավորիչների մտքերը մտցնել առաջավոր Ասիա: Սիրիայի Կոմկուսի քարտուղար և արաբական ազգային ազատագրական շարժման ամենահայտնի դեմքերից Խալեդ Բեկդաշը Ալ-Կավակիբիին համարում է XIX դարի արաբական ազգային ազատագրական շարժման ամենախոշոր դեմքերից մեկը:

ցավ: Եվ դա հասկանալի է: Ազուրին, գործելով արտասահմանում և հանդես գալով օտար լեզվով, չէր կարող մոտիկից կապվել արաբ ժողովրդի հետ, նրան հաղորդել իր առաջավոր գաղափարները, հուզել, պայքարի հանել նրան:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, համիդյան բռնակալության ժամանակաշրջանում արաբական ազգային ազատագրական շարժումը նկատելի չափով թուլացավ: XIX դարի 70-ական և 80-ական թվականներից Եգիպտոսը, առաջին անգամ անջատվելով համաարաբական ազգային շարժումներից և որդեգրելով իր համար ազգային ազատագրական պայքարի ինքնուրույն ուղի: Եգիպտական ազգային ազատագրական շարժումը ուղղված էր ոչ այնքան Եգիպտոսում, օսմանյան իշխանության հետզհետե մարող ազդեցության դեմ, որքան Թևֆիկ Իսմայիլի կողմից հովանավորվող՝ ծագումով օտարազգի[1] տեղական ղեկավարող կաստայի, ինչպես նաև նորամուտ անգլիական իմպերիալիզմի դեմ, որը երկրի օկուպացման առաջին իսկ օրից (1882) ընտրել էր եգիպտական ազգային էմանսիպացիան խափանելու ուղին:

Այդ թվականներից սկսած, Եգիպտոսում, ազգային ազատագրական շարժումը առավելապես հանդես է գալիս տեղական՝ եգիպտական ազգայնական գունավորումով: Ճիշտ է Բեյրութի և Կահիրեի միջև կապը շարունակվեց պահպանվել, արաբական ազգային ազատագրական շարժման այդ երկու գլխավոր կենտրոնները շարունակեցին փոխադարձ ազդեցություն ունենալ միմյանց վրա, սակայն նրանց պայքարի նպատակներն այլևս նույնը չէին: Սիրիան ձգտում էր ազատվել օսմանյան լծից և համաարաբական անկախ պետություն ստեղծել, մինչդեռ Եգիպտոսի նպատակն էր ազատվել թե անգլիական իմպերիալիզմի ճնշումից և թե տեղական իշխանությունների լծից, խդիվյան բռնակալություններից ու հաստատել անկախ պետություն: Հենց դրանով էլ ազգային ազատագրական շարժումը Եգիպտոսում ինքնուրույն ուղի որդեգրեց՝ երկիրն անգլիական իշխանությունների կողմից օկուպացիայի ենթարկվելուց անմիջապես հետո: Առաջին բռնկումը, որը ղեկավարում էր Արաբի փաշան, տեղի ունեցավ 1882 թվականին:

Եգիպտական ազգային ազատագրական շարժումն առանձնապես լայն զարգացում է ստանում առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ իրար հետևից կազմակերպվում են քաղաքական մի շարք պարտիաներ:

Աբդուլ Համիդը մեծ ճարպկությամբ շահագործեց արաբների մոտ գոյություն ունեցող միջկրոնական և այլ կարգի հակասությունները, հրահրելով նրանց տարաձայնությունները, ամեն կերպ քաջալերելով նրանց մասնատվածությունը:

Բուրժուական պատմագրությունն ամեն կերպ ձգտում է ցույց տալ, որ իբր արաբական երկրներում ազատագրական գաղափարները գերազանցապես մուտք են գործել արևմտյան երկրներից: Այսպես, Մ. Ստայները[1] գրում է... այս զարթոնքի (արաբական նացիոնալիզմի—Հ. Թ.) աղբյուրը մուսուլմանությունը չէ: Որքան էլ որ տարօրինակ թվա, ժամանակակից նացիոնալիզմը բխում է արևմուտքի ազդեցությունից: Որով, արաբական

[1] Այդ ժամանակ ղեկավար պոստերում հիմնականում աշխատել են ծագումով թյուրք գործիչներ:

նացիոնալիզմը Սիրիայում, ավելի շուտ պարտական է արևմտականացած քրիստոնյա արաբին, քան մուսուլման տարրին»[1]: Ըստ Ստայների այդ գաղափարները ներմուծել են ֆրանսիական և ամերիկյան միսիոներներն իրենց դպրոցներով և տարածած գրքերով: Մինչդեռ իրականում, միսիոներական և գաղութային կազմակերպությունները ինչպես ամեն մի երկրի, այնպես էլ արաբական երկրների ազատագրական շարժումների թշնամիներն են եղել, ամեն կերպ օժանդակել են գաղութային պետությունների էքսպանսիոնիստական քաղաքականությանը:

Անգամ բուրժուական որոշ պատմաբաններ, ինչպես Ժորժ Անտոնիուսը[2], հարկադրված են խոստովանել, որ միսիոներական դպրոցները թմրեցուցիչ, իր խոսքերով ասած «... ըթացուցիչ ազդեցություն են գործել...» ազգային ազատագրական շարժման ընդհանուր կուրսի վրա: Ֆրանսիական, ամերիկյան, անգլիական և մինչև անգամ իտալական ու գերմանական միսիոներական կազմակերպությունները հանդիսանում էին յուրաքանչյուրը իր մայր երկրի քաղաքական ծրագրերի համար պայքարող կենտրոններ: Նրանց հետապնդած քաղաքականության հիմքում ընկած էր արաբ երիտասարդներին օտարացնելու, նրանց մայրենի լեզուն, ազգային կուլտուրան մոռացնել տալու ձգտումը: Արաբերեն լեզվի մոռացումը թուլացնում էր արաբ ինտելիգենցիայի կապը ժողովրդի հետ և վնասում ազգային ազատագրական շարժմանը:

Ֆրանսիական կառավարությունը, հետապնդելով Մերձավոր Արևելքում իր ազդեցությունը տարածելու քաղաքականություն, դրամական ու բարոյական ամեն տեսակի օժանդակություն էր ցույց տալիս այդ երկրներում գործող ֆրանսիացի միսիոներներին, որոնք իրենց գործունեությամբ ֆրանսիական գաղութարարների առաջ հարթում էին ներթափանցման ողորկ ճանապարհ: Հետապնդելով քաղաքական այսպիսի նպատակ, ֆրանսիական մոնոպոլիաները դաշն էին կնքել արաբ քրիստոնյա մարոնիների հատվածի հետ և հանդես գալով մարոնիների «պաշտպան»-ի դերում միջամտում էին օսմանյան կայսրության ներքին գործերին:

Առաջնորդվելով նույնպիսի տնտեսական նպատակներով, անգլիական կառավարությունն էլ դարձել էր ինքնակոչ «պաշտպանը» դրուզ բնակչության: Իսկ գերմանական և ամերիկյան կառավարությունները իրենց համար հենարան էին գտել հանձին իրենց կողմից ստեղծված բողոքական զանազան սեկտաների:

* * *

Ինչպես հայտնի է՝ համիդյան բռնապետության դեմ էր ուղղված նաև Երիտասարդ թյուրքերի շարժումը, սակայն ոչ մի զուգահեռ չի կարելի անցկացնել նրա և արաբական ազգային ազատագրական շարժման միջև: Երկու շարժումներն էլ դեմ էին համիդյան ռեժիմին, մինչդեռ նրանց հետապնդած նպատակները տրամագծորեն իրար հակառակ էին: Արաբական շարժման նպատակն էր ազատագրվել ամեն մի օտար տիրակալությունից, Երիտասարդ թյուրքերի ձգտումն էր՝ անցնելով իշխանության գլուխ, հաստատել ժողովուրդներին պահել նույն կախման մեջ, փորձել ձուլել նրանց օսմանցիների մեջ:

[1] *M. I. Steiner*, Inside Pan-Arabia, Chicago, 1947, p. 79.

[2] *G. Antonius*, The Arab Awakening, New York, 1939, p. 92.

Այս բոլորով հանդերձ, 1908 թ. կոնստիտուցիոն մեծ խանդավառությամբ դիմավորվեց նաև արաբների կողմից, որոնք մեծ հույսեր էին կապում պետական այդ հեղաշրջման հետ:

Այս պայմաններում է, որ հիմնվում է «Ալ Իխա Ալ Արաբի Ալ Ութմանի» (Օսմանյան արաբների եղբայրությունը), որի հիմնական նպատակներն էին՝ պաշտպանել կոնստիտուցիան, հավատարիմ մնալ սուլթանին, բարվոքել արաբական պրովինցիաների վիճակը, ապահովել արաբական լեզվի և կրթության տարածումը և այլն: Ընկերությանը անդամակցեցին տարբեր խավերի պատկանող արաբներ անկախ իրենց կրոնքից և դավանանքից:

Թյուրք-արաբական այս համագործակցությունը սկզբից ևեթ չունեցավ որևէ ռեալ հիմք: Նոր պառլամենտի ընտրությունների ժամանակ թյուրք-արաբական բախումները այնպիսի սուր բնույթ ընդունեցին, որ ընկերությունը կորցրեց իր գոյության իմաստը:

1908 թ. տվյալների համաձայն օսմանյան կայսրության բնակչությունը հաշվվում էր 22 միլիոն, որից միայն $7^{1}/_{2}$ միլիոնը թյուրքեր էին, մինչդեռ արաբների թիվը էր $10^{1}/_{2}$ միլիոն՝ առանց հաշվելու Եգիպտոսը, որը նույնպես բաղկացած էր առավելապես արաբ բնակչությունից: Չնայած այս հանգամանքին և կոնստիտուցիայում նախատեսված իրավահավասարության սկզբունքին Երիտասարդ թյուրքերը ընտրությունների ժամանակ դիմելով կեղծիքի, շանտաժի և բռնության այլ և այլ միջոցների՝ պառլամենտում անցկացրին 150 թյուրք դեպուտատ, 60 արաբի դիմաց (ընդհանուր դեպուտատների թիվը եղավ 245):

Երիտասարդ թյուրքերի այս քայլը բացահայտեց՝ կայսրության մեջ ապրող բոլոր ժողովուրդների իրավահավասարության վերաբերյալ նրանց դեկլարացիաների ու խոստումների ողջ կեղծիքը:

1909 թ. ապրիլ ամսին Երիտասարդ թյուրքերի իշխանությունը տապալելու անհաջող փորձ կատարեց Աբդուլ Համիդը: Այդ փորձի ձախողման գործում վճռական դեր խաղաց ազգությամբ արաբ զորավար՝ Մահմուդ Շեքեթը: Կառավարական շրջանների ռեակցիոն դարձավ տավել մակեդին: Երիտասարդ թյուրքերի կառավարությունը, վախենալով արաբների քաղաքական աշխուժացումից, ցրեց բոլոր միությունները և հատկապես փոքրամասնություններին պատկանող կազմակերպությունները, որոնց թվում էր «Ալ Իխա Ալ Արաբի Ալ Ութմանին»: Այս և նման այլ միությունների արգելքը մղեց արաբ հայրենասերներին ընդհատակյա աշխատանքի՝ ընդդեմ Երիտասարդ թյուրքերի՝ Համիդից ոչ պակաս դաժան իշխանության:

Ընդհատակյա գաղտնի կազմակերպություններին զուգահեռ, այդ տարիներին, արաբական ազգային ազատագրական շարժման ծավալման գործին մեծապես նպաստեցին առաջացած ոչ քաղաքական բնույթ ունեցող գրական-գեղարվեստական և այլ ակումբները: Դրանցից իրենց գործունեությամբ աչքի ընկան՝ «Ալ Մունտադա ալ Ադաբին» (Գրական ակումբ), որը հիմնվեց Կոստանդնուպոլսում 1909 թ. բարձրաստիճան արաբների ու ուսանողների կողմից: Թեև այս ընկերությունը արաբական ազգային

ազատագրական շարժման մեջ մեծ դեր չկատարեց, սակայն արաբական կուլտուրայի և լավագույն արագիցիաների պահպանման գործում նշանակալից աշխատանք կատարեց։ Այնուհետև, ավելի ուշ, երբ օսմանյան կայսրությունը բալկանյան և Լիբիայի անհաջող պատերազմների հետևանքով սկսել էր տերիտորիալ զիջումներ անել, արաբների, ինչպես և այլ փոքրամասնությունների մոտ սկսում է առաջ քաշվել տեղական ավտոնոմիայի գաղափարը, ահա այդ պայմաններում է, որ 1912 թ. Կահիրեում հիմնվում է «Հիզբ Ալ Լամարկազիյահ ալ Իգարիյահ ալ Ութմանի» («Օսմանյան ապակենտրոնացման կուսակցությունը») հիմնական նպատակն էր օսմանյան իշխանությունների ուժը թուլացնել՝ հատկապես կայսրությանը մաս կազմող արաբական երկրներում և այդ վայրերում ձեռք բերել ներքին գործերի որոշ ավտոնոմիա։ Կարճ ժամանակամիջոցում կուսակցությանը հաջողվում է իր շուրջը համախմբել արաբ հայրենասերների լավագույն տարրերին և դառնալ արաբական ազգային ձգտումների կենտրոնը։ Նույն նպատակներն էին հետապնդում, ավելի ուշ Բեյրութում և Բասրահում հիմնված «Ալ Իսլահ» (ռեֆորմ) անունը կրող միությունները։

Այս կազմակերպությունների հիմնադիրներից շատերը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թյուրք իշխանությունների կողմից կախաղան հանվեցին։ Մինչև այժմ այդ խոշոր հայրենասերների հիշատակը հարգվում է արաբների կողմից որպես ազգային գաղափարի համար զոհվածների։

Այս կազմակերպություններից՝ «Հիզբ ալ Լամարկազիյահ ալ Իգարիյահ ալ Ութմանին» արաբական ազգային շարժման գործում խոշոր դեր կատարեց։ Մինչև այս պարտիայի հիմնադրվելը, թյուրքական իշխանությունների դեմ արաբ հայրենասերների կողմից ծավալվող պայքարը տարվում էր անկազմակերպ։ Նրա ստեղծումից հետո պայքարի ձևն ու էությունը հիմնովին փոխվում է, այն ընդունում է ավելի համակենտրոնացված ու կազմակերպված բնույթ։

Վերոհիշյալ կազմակերպություններին զուգահեռ՝ գործում էին նաև մի շարք գաղտնի ընկերություններ, որոնցից իրենց գործունեությամբ և նշանակությամբ հիշատակության արժանի են՝ «Ալ-Կահտանիյահ»-ը, «Զամայիահ ալ Արաբիյահ ալ Ֆատատ»-ը։ «Ալ Կահտանիյահ»-ը, հիմնվել է 1909 թ., նույնպես Երիտասարդ թյուրքերի կենտրոնաձիգ քաղաքականությանը հակադրվում էր ապակենտրոնացման ծրագրով։ Նա պահանջում էր՝ օսմանյան կայսրության արաբական պրովինցիաներում կազմել անջատ պետություն, առանձին պառլամենտով և տեղական ավտոնոմիայով, այդ պրովինցիաներում արաբերենը դարձնել պաշտոնական լեզու, որպես թագավոր ճանաչել օսմանյան սուլթանին, մի խոսքով թյուրքո-արաբական մի կայսրություն, Ավստրո-հունգարական պետության օրինակով։

«Զամայիյահ ալ Արաբիյահ ալ Ֆատատ (Երիտասարդ արաբների ընկերությունը) հիմնվեց 1911 թ. Փարիզում։ Այս ընկերությունը հետապնդում էր արաբական երկրների բացարձակ և անվերապահ անկախություն։ Պայքար ծավալելով օսմանյան լծի դեմ՝ միաժամանակ նա դեմ էր արևմտյան տերությունների հովանավորությանը։ «Ալ Ֆատատը» պահանջում էր լրիվ անկախություն և բացարձակապես դեմ էր «Հիզբի» և այլ կազմակերպությունների պահանջած մասնակի անկախությանը։ Հենց դրանով

էլ, նա մի քայլ առաջ էր իր նախորդ բոլոր պարտիաների և կազմակերպությունների հետ համեմատած։

«Ալ Ֆատատի» ազդեցությունը ազգային ազատագրական շարժման հետագա ընթացքի վրա՝ մեծ եղավ։ Պայքարի իր նոր մեթոդներով նա դարձավ արաբական այս տիպի ընկերություններից ամենամարտունակը։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ընկերության անդամներից շատերը թյուրքական իշխանությունների կողմից ձերբակալվեցին և ամեն տեսակի չարչարանքների ենթարկվեցին, սակայն նրանցից և ոչ մեկը ընկերության գաղտնիքները չհայտնեց, ու չդավաճանեց։

Վերջապես, այս ընկերությունների շարքին է պատկանում «Ալ Հուրիյահ ու ալ Իտիֆաք» (ազատություն և համերաշխություն), որը թեև արաբական ազգային ազատագրական շարժման մեջ մեծ դեր չի կատարել, սակայն հիշատակության արժանի է նրանով, որ իր մեջ միավորում էր թյուրքական իշխանություններից դժգոհ տարրերին, անկախ կրոնական և ազգային պատկանելիությունից։ Նրա աշխատանքներին մասնակցեցին օսմանյան կայսրության համարյա բոլոր փոքրամասնությունների ներկայացուցիչները, անգամ մի շարք լիբերալ թյուրքեր, որոնք հիասթափվել էին Երիտասարդ թյուրքերի քաղաքականությունից։

Նման ընկերությունների ամենաեռանդուն գործունեության շրջանում է, որ Փարիզում գումարվում է համաարաբական ազգային կոնգրեսը, որը պահանջում է տեղական ավտոնոմիա, օսմանյան կայսրության արաբական պրովինցիաների համար, ինչպես նաև մի շարք ռեֆորմներ։ Այդ նպատակի համար կազմվում է ռեֆորմի կոմիտե, որի նպատակն էր լինելու կոնգրեսի ընդունած որոշումների կենսագործումը։ Սակայն կոմիտեն ոչ մի գործնական արդյունքի չի հասնում։ Նրա անդամներից շատերը նույնպես առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ձերբակալվում են, իսկ մի քանիսը մահապատժի ենթարկվում։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին օսմանյան կայսրության և նրա դաշնակիցների համար արաբ ազգային շարժումը անհանգստության լուրջ աղբյուր էր։ Այդ հանգամանքը պետք էր, որ օգտագործվեր և իսկապես օգտագործվեց Անտանտի տերությունների կողմից, որոնք Մերձավոր Արևելքում իրենց ազդեցությունը ուժեղացնելու համար փորձեցին հանդես գալ արաբական ազգային-ազատագրական շարժումը «հովանավորողի» դերում։

Սուլթան Խալիֆի սրբազան պատերազմի (Ջիհադի) հռչակումը, եթե խոր արձագանք գտներ արաբական երկրներում, հավանական է, որ ողջ իսլամական աշխարհը անցներ Անտանտի թշնամիների կողմը։

Հեջազի Շարիֆ Հուսայնը գեռևս վերջնականապես չէր կողմնորոշվել այդ հարցում, երբ «Ալ Ֆատատը», որը իր կենտրոնը փոխադրել էր Դամասկոս, գաղտնի պատվիրակ է ուղարկում Մեկկա՝ հրավիրելով Մեկկայի իշխանություններին՝ միանալ և կազմել արաբական դիմադրության մի ընդհանուր ճակատ։ Թե «Ալ Ֆատատ» կազմակերպության անդամները և թե Շարիֆ Հուսայնի կողմնակիցները, թյուրքական լծից ազատվելու իրենց բոլոր ցանկություններով հանդերձ, բացարձակապես դեմ էին եվրոպական իմպերիալիզմի գերիշխանությանը։ Դամասկոսում կայացած «Ալ Ֆատատի» գաղտնի ժողովներից մեկում, որին ներկա էր Հուսայնի որդիներից Ֆայ-

սալը, հետևյալ ձևով է գնահատում դրությունը, Թյուրքիան պատերազմի մասնակից դառնալու հետևանքով՝ օսմանյան կայսրությանը մաս կազմող արաբական պրովինցիաներին լուրջ վտանգ է սպառնում, ոչ մի ճիգ չպիտի խնայել ձեռք բերելու համար այդ պրովինցիաների ազատագրումը և անկախությունը։ Միաժամանակ որոշվում է, որ եթե եվրոպական տերությունները փորձեն իրենց ազդեցությունը տարածել արաբական երկրներում, ընկերությունը հարկադրված պիտի փոխի իր դիրքը և անցնի թյուրքերի կողմը, պայքարի օտարերկրյա ներթափանցումների դեմ։

Անցյալում թյուրք-արաբական կոնֆլիկտները միշտ օգտագործվում էին արևմտյան տերությունների կողմից՝ միջամտելու համար Թյուրքիայի ներքին գործերին, որը ոչնչով չէր նպաստում արաբների ազգային ազատագրական պայքարին։ Ելնելով այդ փորձից՝ արաբական ազգային-ազատագրական շարժումները դեկավարող գրեթե բոլոր միությունները սկզբնական շրջանում չեզոք դիրք են բռնում և կամ կողմնորոշվում են դեպի զգույշ և չափավոր քաղաքականություն։ Մինչև անգամ Ադիզ Ալին[1] խիստ զգուշացնում է «Ալ Ահդ» ընկերության անդամներին և կոչ անում զեռևս չապըստամբվել թյուրքական իշխանությունների դեմ, քանի որ այդպիսի դեպքում կայսրությանը արաբական պրովինցիաները կարող էին ընկնել դաղութարարների գերիշխանության տակ։ Արաբների այս դիրքավորումը վկայում է, որ նրանք մի կողմից ատում էին թյուրքական լուծը, մյուս կողմից կասկածանքով էին վերաբերվում արևմտյան իմպերիալիստների հետագա դիտավորությունների նկատմամբ։

«Ալ Ահդ» ընկերությունը «Ալ Ֆատատ» ընկերության քույր կազմակերպությունն էր և գործում էր բանակում։ «Ալ Ահդ» ընկերության ազդեցությունը օսմանյան բանակի արաբ սպաների մոտ այնքան մեծ էր, որ անգամ Ջեմալ փաշան իր հուշերում այդ կապակցությամբ հետևյալն է ասել՝ «... եթե օտարերկրյա ինտրիգների հետևանքով այս շրջանի կայսրությունում ապստամբություն ծագեր, ապա այն զսպելու համար ոչ մի հնարավորություն չկար և կասկածից դուրս էր, որ այդպիսի դեպքում Թյուրքիան արաբական իր բոլոր պրովինցիաները պիտի կորցներ»[2]։ Այստեղ պիտի նշել, որ այդ բանակի սպայակույտը, այդ ժամանակ, բաղկացած էր առավելապես արաբներից։

Մինչ այդ, Շերիֆ Հուսայնի և Անտանտի տերությունների, տվյալ դեպքում Անգլիայի միջև բանակցություններ էին սկսվել արաբական երկրներում թյուրքական իշխանությունների դեմ գիմադրություն, մինչև անգամ զինված ապստամբություն կազմակերպելու համար։ Այդ առթիվ «Ալ Ֆատատը» և «Ալ Ահդը» միասին մի արձանագրություն են կազմում, որի մեջ մանրամասն նշում են այն մինիմում պայմանները, որի շրջանակներում արաբական ազգային ազատագրական շարժման լիդերները համաձայն կլինեին համագործակցել Անգլիայի հետ։ Այդ փաստաթղթում պահանջվում էր մի այնպիսի բացարձակ անկախություն, որտեղ օտար-

[1] Թյուրքական բանակի նախկին գեներալ, ձերբակալվել և հալածանքների էր ենթարկվել թյուրքական իշխանությունների կողմից՝ արաբական ազգային-ազատագրական շարժման մեջ իր ակտիվ գործունեության համար։

[2] *Jemal Pasha*, Memories of a Turkish Statesman, London (undated).

երկրյա ամենափոքր միջամտությունը, անգամ կապիտուլյացիոն որևէ ռեժիմ, չպիտի հանդուրժվեր։ Այս որոշումը ուղարկվեց Շարիֆ Հուսայնին, որպեսզի այն հիմք ծառայեցնի իր հետագա բանակցություններում։

1916 թ. հունիս ամսին արաբական զինված ապստամբությունը նախատեսված մասշտաբներով տեղի չունեցավ։ Շարիֆ Հուսայնի մշակած ծրագրի համաձայն, զինված ապստամբությունը սկսվելու էր Սիրիայում և Հեջազում համատեղ, և զուգակցվելու էր Ալեքսանդրետում Անտանտի ուժերի դեսանտային գործողություններին, թյուրքական ուժերը ակցանի մեջ առնելու նպատակով։ Այնուհետև, հարձակվողները, շարունակելով իրենց հարվածները պիտի ուղղվեին դեպի Արևելք՝ Իրաքը ազատագրելու համար։ Սակայն, վերջին բոսկին Անտանտը, հրաժարվելով այդ ծրագրից, թողեց Հուսայնին, որպեսզի առանձին հարձակվի Հեջազի թյուրքական կայազորի վրա, որով և ապստամբությունը կրեց տեղական բնույթ։ Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Անտանտը այդպես վարվեց, որպեսզի Շարիֆ Հուսայնին առաջնորդ Ասիայի արաբական երկրների նկատմամբ իր ունեցած հավակնությունները չընդարձակի։

Մինչ այդ, թյուրքական բանակի արաբական ճակատի ընդհանուր հրամանատար և ռազմական կառավարիչ Ջեմալ փաշան Սինայի ճակատում իր կրած պարտություններից կատաղած, իր անհաջողությունների համար սկսեց ամբաստանել արաբներին, հետապնդելով արաբ հայրենասերներին, նրանց ենթարկել ամեն տեսակի խոշտանգումների։

Ջեմալ փաշան սկսեց իր «մաքրագործումը» բանակից։ Ու երբ Էնվերը 1915 թ. հունիսին Գելիպոլիի ճակատի համար հավելյալ ուժերի կարիքն էր զգում, Ջեմալ փաշան, այդ պատեհությունից օգտվելով, իսկույն և եթ Սիրիայից ուղարկեց 25-րդ դիվիզիան, որը հիմնովին արաբներից էր բաղկացած ու հանդիսանում էր «Ալ Ահդ» կազմակերպության հենարանը։ Հետագայում նույնպես, ամեն մի առիթով նա ուրիշ ճակատներ ուղարկեց արաբներից բաղկացած գնդերը և առավել ևս արաբ սպայակույտը։ Իր հարձակումներն ուղղելով քաղաքական մյուս կազմակերպությունների դեմ, Ջեմալը ձերբակալել տվեց բոլոր արաբ հայտնի գեմքերին, անկախ այն բանից, որ նրանք ազգային ազատագրական շարժումների մեջ ակտիվ դեր կատարել են, թե ոչ։ Նա ձերբակալվածներին ենթարկեց ամեն տեսակի չարչարանքների՝ կեղծ խոստովանություններ ձեռք բերելու համար։ 58 հայրենասեր արաբներ մահվան դատապարտվեցին, որոնցից 45-ը ի բացակայության, որովհետև գտնվում էին արտասահմանում։ 1915 թ. օգոստոսի 21-ին Բեյրութի գլխավոր հրապարակներից մեկում 11 հայրենասերներ կախաղան հանվեցին։

* * *

Պատերազմի տարիներին, արաբներն իրենց կողմը ներգրավելու և օսմանյան կայսրության թիկունքը թուլացնելու նպատակով Անտանտի պետությունները արաբ ժողովրդի ներկայացուցիչներին շռայլեցին կեղծ խոստումներ։

Այդ քաղաքականության համար բնորոշ օրինակ է հետևյալ փաստը։ Պաղեստինի տերիտորիան նրանք խոստացել էին Հուսայնին, հետագայում կազմվելիք արաբական ֆեդերացիայի որպես բաղկացուցիչ մի մասը, միև-

նույն ժամանակ այդ նույն տերիտորիան նրանք խոստացել էին հրեա սիոնիստներին, որպես այդ ժողովրդի «ազգային օջախը» առանց մերժելու նաև այն հավակնությունը, որ ուներ Անգլիան նույն այդ տերիտորիայի նկատմամբ, որպեսզի Սուեզի ջրանցքի ձախ ափին բրիտանական կայսերական ճանապարհների վրա մի նոր ամրոց ու հենարան ապահովի։

Երբ պատերազմը ավարտվեց Անտանտայի պետությունների հաղթանակով, և երբ չկար այլևս արաբներին սիրաշահելու նույն անհրաժեշտությունը, անգլիական և ֆրանսիական իշխանություններն իրենց խոստումները մոռանալով, ամբողջ միմյանց մեջ բաժանելու համար՝ մտան սակարկության։ Այդ խիստ սակարկությունների (որոնք առանձին դեպքերում վերածվեցին լուրջ հակամարտությունների) հետևանքը եղավ մանդատների և առանձին արաբական կախյալ պետական միավորների ստեղծումը, ազգային հարցի մի լուծում, որը արամադրորեն հակառակ էր արաբական ժողովուրդների ազգային ազատագրական ձգտումներին, այն պայքարին, որ արաբ ժողովուրդը երկար տարիներ մղել էր և այժմ էլ շարունակում է մղել իմպերիալիստական օտարերկրյա գաղութարարների դեմ։

254

Сектор Востоковедения АН Арм. ССР
БИБЛИОТЕКА
ԳՐԱԴԱՐԱՆ